

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Իջևան



Տարածքը	2704 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	93574 հա
այդ թվում՝ վարելահողեր	27294 հա
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	58
Գյուղական բնակավայրեր	61
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	134.3 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	50.5 հազ. մարդ
գյուղական	83.8 հազ. մարդ

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս - արևելյան հատվածում: Ընդգրկում է Իջևանի, Տավուշի (նախկինում՝ Շամշադին), Նոյեմբերյանի տարածաշրջանները և 4 քաղաքներ՝ Իջևանը, Նոյեմբերյանը Բերդը և Դիլիջանը: Մարզը հարավ-արևելքում և հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին և Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին: ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 400 կմ հատված, որից 352-ը՝ Ադրբեջանի հետ:

Մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2993 մ:

ՀՀ Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է Հայաստանի Հանրապետության չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: 1970-1980թթ. կառուցվել են Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

Մարզի բնությունը գեղատեսիլ է: Ընդհանուր մակերեսի 51%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ, պատմական ժառանգության անգուգական հուշարձաններով: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին (դենդրոպարկը): Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

Արարատյան թագավորության (Ուրարտու) ստեղծումից (մ.թ.ա. IX դար) հետո Ետունի (Ուտիք) նահանգի կազմում է գտնվել Տավուշի մարզի ողջ տարածքը: Մարզի կենտրոնական և արևմտյան հատվածները գտնվել են Տիգրան Մեծի ստեղծած Մեծ Հայքի եզրային 4 գորավարություններից (բղեշխություններից) մեկի՝ Գուգարքի մեջ: Դիլիջանն իր շրջակայքով, որպես հայ թագավորների որսարան և ամառային հանգստավայր, մտել է Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի մեջ: Իսկ մարզի արևելյան հատվածը եղել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Տուսքուստակ (միջնադարում՝ Տավուշ անվանմամբ) գավառը:

Մարզի տարածքը մշտապես ենթարկվել է հյուսիսից և արևելքից արշավող ռազմաշունչ ցեղերի հարձակումներին: XVII դարի վերջին ռուսաց ցարը Ղազախի երկրամասը շնորհում է Ղարաբաղի մեծիքներին և, արդյունքում, վերակենդանանում են հայաթափված Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները: XVIII դարի սկզբին Ղազախ-Շամշադին տեղամասը ներառվում է Լոռու գավառի մեջ, իսկ 1868թ. Ղազախի գավառ անունով միացվում է Ելիզավետապոլի նահանգին:

ՀՀ Տավուշի մարզի տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ: Հատկանշական են Գոշավանքը, Հաղարձնի ու Մակարավանքի համալիրները, Տավուշ բերդը և այլն: Տավուշի մարզում է գտնվում ՀՀ ամենախոշոր աղյուսակերտ եկեղեցին՝ Կիրանցի վանքը: 1998թ. մարզկենտրոն Իջևանում օծվեց ս.Ն. Շնորհալի եկեղեցին:

Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը: Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9.1%-ը, 1 քառ.կմ-ի վրա ապրում է 49.7 մարդ: ՀՀ Տավուշի մարզի բնակչությունը 2003թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 4.2%-ը, որի 62.4%-ը բնակվել է գյուղական վայրերում:

2003թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում **ՀՀ Տավուշի մարզի** արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 0.9%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 5.7%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 1.1% և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 1.2%-ը:

Մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Մինչ հողի սեփականաշնորհումը մարզը տալիս էր հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի 9%-ը և գյուղատնտեսական հանդակների միավոր տարածությունից ստացվող արտադրանքի ծավալով զիջում էր միայն Արարատյան տնտեսական շրջանին: Բուսաբուծության մեջ առավել զարգացած ճյուղերն էին ծխախոտագործությունն ու այգեգործությունը, անասնապահության մեջ՝ խոզաբուծությունը:

Մինչև 1990թ. մարզը տալիս էր հանրապետության ծխախոտի 33%-ը և պտղի՝ 23%-ը: Նախկին Շամշադինի և Իջևանի վարչական շրջանները հանրապետությունում գրավում էին առաջին երկու տեղերը՝ ծխախոտի հումքի (տարեկան համապատասխանաբար 2500-2700 տոննա և 1800-2000 տոննա), Նոյեմբերյանի շրջանն առաջին տեղը՝ պտուղների (տարեկան 25-30 հազ. տոննա) արտադրությամբ:

Մարզի գյուղատնտեսությունը վերջին տասնամյակում զգալիորեն տուժել է նաև Գևարաբաղյան հսկամարտության պատճառով: Սահմանամերձ ավելի քան 9000 հա այգիներ ու դաշտեր մնում են անմշակ: Գյուղատնտեսության առաջատար ճյուղը ներկայումս հացահատիկային մշակաբույսերի մշակությունն է: Նպատակամետ ծրագրեր են իրականացվում պտղաբուծության (հատկապես՝ դեղձի) վերականգնման ուղղությամբ:

Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը շարունակում է մնալ սննդի արդյունաբերությունը: Տնտեսության առավել զարգացած ճյուղերից են նաև գորգագործությունը և փայտամշակումը: Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիճազրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

2003թ. մարզում գործել են 44 արդյունաբերական, 15 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 23 շինարարական, 7 տրանսպորտային, 1 կապի, 186 ծառայություններ մատուցող, 658 մանրածախ առևտրի գործող օբյեկտների, որոնցից 235-ը խանութներ են, 399-ը՝ կրպակներ, 20-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 2-ը՝ սպառողական ապրանքների և 2-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

2003թ. մարզում գործել են նաև 42 նախադպրոցական հիմնարկ, 83 հանրակրթական, (այդ թվում՝ 2 վարժարան, 1 դպրոց-մանկապարտեզ, 1 գիշերօթիկ դպրոց), 16 երաժշտական և արվեստի, 4 մարզական դպրոցներ, 5 պետական և 2 ոչ պետական միջին մասնագիտական, 2 պետական և 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 4 թանգարան, 75 գրադարան, 3 հյուրանոց, 23 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 3 առողջության կենտրոն և 7 հիվանդանոց, մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

Իջևանի տարածաշրջան

Վարելահողեր	6747 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	21
Գյուղական բնակավայրեր	24
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	48.0 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	20.3 հազ. մարդ
գյուղական	27.7 հազ. մարդ

2003թ. ՀՀ Տավուշի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Իջևանի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 71.7%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 54.8% և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 39.9%:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 18 արդյունաբերական, 6 գյուղատնտեսության, 15 շինարարական, 3 տրանսպորտային, 1 կապի, 51 ծառայություններ մատուցող, 287 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 91-ը խանութներ են, 184-ը՝ կրպակներ, 10-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի և 1-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ:

Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 28 հանրակրթական դպրոց, այդ թվում՝ 1 վարժարան, 5 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոց, 8 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական և 2 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 1 թանգարան, 25 գրադարան, 2 հյուրանոց, 8 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 1 առողջության կենտրոն, 1 հիվանդանոց և այլն:

ՀՀ Տավուշի մարզկենտրոնը **Իջևան քաղաքն է** (մինչև 1919թ.-ը՝ Քարվանսարա), որի բնակչությունը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 20.3 հազ. բնակիչ: Գտնվում է Երևանից 137 կմ հեռավորության վրա: Ողջ հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, մետաղամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունները): Իջևան քաղաքը հայտնի է նաև գորգագործությամբ:

2003թ. քաղաքում գործել են 9 արդյունաբերական, 10 շինարարական, 3 տրանսպորտային, 43 ծառայություններ մատուցող, 187 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 87-ը խանութներ են, 10-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի և 1-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ:

Քաղաքում գործել են նաև 6 հանրակրթական, այդ թվում՝ 1 վարժարան, 3 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոց, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական միջին մասնագիտական, 1 պետական և 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 1 թանգարան (պատմաերկրաբանական), 3 գրադարան, 1 հյուրանոց, 3 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց:

Դիլիջանի տարածաշրջան

Վարելահողեր	1540 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	3
Գյուղական բնակավայրեր	3
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	22.3 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	16.0 հազ. մարդ
գյուղական	6.3 հազ. մարդ

2003թ. ՀՀ Տավուշի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում *Դիլիջանի տարածաշրջանի* տեսակարար կշիռը կազմել է 2.9%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 6.9% և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 24%:

2003թ. *տարածաշրջանում* գործել են 8 արդյունաբերական, 3 գյուղատնտեսական, 3 շինարարական, 1 տրանսպորտային, 39 ծառայություններ մատուցող, 79 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 38-ը խանութներ են, 38-ը՝ կրպակներ, 2-ը՝ հանրային սննդի օբյեկտներ և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա:

Գործել են նաև 9 հանրակրթական, այդ թվում՝ 1 գիշերօթիկ դպրոց, 3 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոցներ, 7 նախադպրոցական հիմնարկ, 3 պետական միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 1 թանգարան, 12 գրադարան, 2 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Դիլիջան ատոջարանային քաղաքի հեռավորությունը Երևանից 101 կմ է: Բնակչությունը 2003թ. կազմել է 16.0 հազ. մարդ: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքների արտադրությունը: Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը:

2003թ. քաղաքում գործել են 8 արդյունաբերական, 3 շինարարական, 1 տրանսպորտային, 36 ծառայություններ մատուցող, 70 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 32-ը խանութներ են, 2-ը՝ հանրային սննդի օբյեկտներ և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 7 հանրակրթական, այդ թվում՝ 1 գիշերօթիկ դպրոց, 2 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոցներ, 6 նախադպրոցական հիմնարկ, 3 միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 1 թանգարան, 7 գրադարան, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց և այլն:

Նոյեմբերյանի տարածաշրջան

Վարելահողեր	9814 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	18
Գյուղական բնակավայրեր	18
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	31.9 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	5.5 հազ. մարդ
գյուղական	26.4 հազ. մարդ

2003թ. ՀՀ Տավուշի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Նոյեմբերյանի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 16.8%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 29.6% և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 20%:

2003թ. *տարածաշրջանում* գործել են 10 արդյունաբերական, 3 գյուղատնտեսության, 3 շինարարական, 1 տրանսպորտային, 38 ծառայություններ մատուցող, 188 մանրածախ

առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 59-ը խանութներ են, 122-ը՝ կրպակներ, 6-ը՝ հանրային սննդի օբյեկտներ և 1-ը՝ սպառողական ապրանքների շուկա:

Գործել են նաև 23 հանրակրթական, այդ թվում՝ 1 դպրոց-մանկապարտեզ, 4 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոցներ, 10 նախադպրոցական հիմնարկ, 1 ոչ պետական միջին մասնագիտական, 1 հյուրանոց, 1 թանգարան, 21 գրադարան, 8 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց և այլն:

Նոյեմբերյան քաղաքի (մինչև 1938թ.՝ Բարանա), բնակչությունը 2003թ. կազմել է 5.5 հազ. մարդ, հեռավորությունը Երևանից 185 կմ է: Քաղաքի գործող 2 արդյունաբերական կազմակերպությունները զբաղված են հացաթխմամբ: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

2003թ. քաղաքում գործել են 4 արդյունաբերական, 2 շինարարական, 1 տրանսպորտային, 22 ծառայություններ մատուցող կազմակերպություններ, 56 մանրածախ առևտրի օբյեկտներ, որոնցից 32-ը խանութներ են:

Քաղաքում գործել են նաև 2 հանրակրթական, 2 գեղարվեստի, 1 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 հյուրանոց, 1 գրադարան, 1 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց և այլն:

Տառիշի տարածաշրջան

Վարելահողեր	9193 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	16
Գյուղական բնակավայրեր	16
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	32.1 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	8.7 հազ. մարդ
գյուղական	23.4 հազ. մարդ

2003թ. ՀՀ **Տավուշի մարզի** արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Տավուշի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 8.6%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 8.7% և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 16.1%:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 8 արդյունաբերական, 3 գյուղատնտեսության, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 45 ծառայություններ մատուցող, 104 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 47-ը խանութներ են, 55-ը՝ կրպակներ և 2-ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 21 հանրակրթական, այդ թվում՝ 1 վարժարան, 3 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոցներ, 17 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 թանգարան, 17 գրադարան, 1 հյուրանոց, 5 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 2 առողջության կենտրոն, 3 հիվանդանոց և այլն:

Բերդ քաղաքի բնակչությունը 2003թ. կազմել է 8.7 հազ.մարդ, հեռավորությունը Երևանից 199 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող

արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում են ադամանդի վերամշակումը (բերովի հումքով), փայտամշակումը և սննդամթերքի արտադրությունը:

2003թ. քաղաքում գործել են 2 արդյունաբերական, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 27 ծառայություններ մատուցող և 68 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 31-ը խանութներ են, 2-ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

2003թ. քաղաքում գործել են նաև 5 հանրակրթական, այդ թվում՝ 1 վարժարան, 2 երաժշտական և արվեստի դպրոցներ, 1 մարզադպրոց, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 գրադարան 1 հյուրանոց, 1 թանգարան, 1 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց և այլն:


ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Իջևան	ք. Իջևան
Բերդ	ք. Բերդ
Դիլիջան	ք. Դիլիջան
Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ազատամուտ	Ազատամուտ
Ակնադրյուր	Ակնադրյուր
Աղավնավանք	Աղավնավանք
Աճարկուտ	Աճարկուտ
Այգեհովիտ	Այգեհովիտ
	Կայան
Այգեձոր	Այգեձոր
Այգեպար	Այգեպար
Այրում	Այրում
Աչաջուր	Աչաջուր
Արծվաբերդ	Արծվաբերդ
Արճիս	Արճիս
Բագրատաշեն	Բագրատաշեն
Բաղանիս	Բաղանիս
Բարեկամավան	Բարեկամավան
Բերդավան	Բերդավան
Բերքաբեր	Բերքաբեր
Գանձաքար	Գանձաքար
Գետահովիտ	Գետահովիտ
Գոշ	Գոշ
Դեբեդավան	Դեբեդավան
Դեղձավան	Դեղձավան
Դիտավան	Դիտավան
Դովեղ	Դովեղ
Ենոքավան	Ենոքավան
Թեղուտ	Թեղուտ
Թովուզ	Թովուզ
Իծաքար	Իծաքար
Լճկաձոր	Լճկաձոր
Լուսահովիտ	Լուսահովիտ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Լուսաձոր	Լուսաձոր
Խաչքառակ	Խաչքառակ
Խաչարձան	Խաչարձան
	Գեղատափ
	Ճերմակավան
Ծաղկավան (Իջևանի տարածաշրջան)	Ծաղկավան
Ծաղկավան (Տավուշի տարածաշրջան)	Ծաղկավան
Կիրանց	Կիրանց
Կոթի	Կոթի
Կողբ	Կողբ
Հաղարծին	Հաղարծ ին
Հաղթանակ	Հաղթանակ
Հովք	Հովք
Մոսեսգեղ	Մոսեսգեղ
Նավուր	Նավուր
Ներքին Կարմիր աղբյուր	Ներքին Կարմիր աղբյուր
Նորաշեն	Նորաշեն
Ոսկեպար	Ոսկեպար
Ոսկեվան	Ոսկեվան
Չինարի	Չինարի
Չինչին	Չինչին
Չորաթան	Չորաթան
Պառավաքար	Պառավաքար
Պտղավան	Պտղավան
Ջուջևան	Ջուջևան
Սարիգյուղ	Սարիգյուղ
Սևքար	Սևքար
Վազաշեն	Վազաշեն
Վարազավան	Վարազավան
Վերին Կարմիր աղբյուր	Վերին Կարմիր աղբյուր
Վերին Բյորփլու ¹	Վերին Բյորփլու ¹



Ոսկեպարի սուրբ Աստվածածին եկեղեցի
(VI-VII դար)

¹ Այս գյուղական համայնքը ներկայումս կրում է Չորական անունը: Սկսած 1993թ.-ից անվանափոխությունը չի արվել, սակայն փաստաթղթերում գրանցվում է (գյուղապետարանի շենքին փակցված է) Չորական անվանումը :

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ՏԱՎՈՒՑԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5108	4892
Ծնվածներ	124	63	61
Մահացածներ	97	50	47
Ամուսնություններ	48	X	X
Ամուսնալուծություններ	3	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	24.2	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	138	70	68
հանրակրթական	1590	812	778
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	106	54	52
միջին մասնագիտական	115	59	56
բարձրագույն մասնագիտական	85	43	42
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	21
Մարզիկներ, մարդ	55	28	27
Զբաղվածներ, մարդ	3716
նրանցից` գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից` գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	172	88	84
բժիշկներ	17
կրտսեր բուժանձնակազմ	49
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	265	135	130
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2089
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	700	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	27610
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	454
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	175	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	179
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	24	X	X



Գոշավանքի համալիր (XII-XIII դար)



Ջուխատակ վանքը Դիլիջանում



Հաղարծնի վանքային համալիր (XI-XIII դար)